

Երևանում միջազգային չափանիշներին համապատասխանող կրկեսի շենքի կառուցման ներդրումային ծրագիր




Ծրագրի նկարագիրը

Ծրագրի նպատակն է Երևանում կառուցել նոր, բազմաֆունկցիոնալ, միջազգային չափանիշներին համապատասխանող կրկեսի շենք:

Կրկեսի նոր շենքը կրկնելու է ապամոնտաժված հին շենքի արտաքին տեսքի ճարտարապետական որոշ տարրեր՝ միաժամանակ լիովին համապատասխանելով նման կառույցների համար սահմանված միջազգային բոլոր չափանիշներին: Նախորդից մոտ 6 մետր ավելի բարձր կրկեսի նոր շենքն ունենալու է 3 փոխարկվող մանեժ, 2200 հանդիսատեսի համար նախատեսված նստատեղ՝ նախկինում եղած 1560-ի փոխարեն: Կրկեսը հագեցած է լինելու ժամանակակից բեմական տեխնիկայով:

Կառուցվող շենքում կլինեն զվարճանքի տարբեր կենտրոններ, սննդի կետ, կգործեն հյուրանոցային համարներ:



**Տեխնիկական
ցուցանիշներ**



Շինարարական ընդհանուր մակերեսը վերգետնյա և ստորգետնյա մասերի համար կազմում է 20600 քմ, կառուցապատման մակերեսը՝ 4280 քմ:

Հարկայնությունը՝ 2 ստորգետնյա և 6 վերգետնյա:

Հանդիսատեսային դահլիճ՝ 2200 նստատեղ:

Համալիրը ապահովված է լինելու ստորգետնյա ավտոկայանատեղով՝ մոտ 70 մեքենայի համար:

**Ծրագրի
ժամկետները**

Երևանի կրկեսը շահագործման կհանձնվի 2017թ.:

**Ծրագրի
արժեքը**

Ծրագրի արժեքը կազմում է շուրջ 3 մլն ԱՄՆ դոլար:

**Ներդրումների
ձևը և
հիմնական
պայմանները**

Ծրագիրն իրականացվում է մասնավոր ներդրողի կողմից: Կառուցապատող՝ «Երևանյան Կրկես» ՍՊ ընկերություն:

**Ներկա
իրավիճակ**

Կառույցի երկաթ-բետոնե հիմնակմախքի կառուցման աշխատանքները մոտենում են ավարտին: